

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 55-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով

Համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝


Հաստատել Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 12 արտահերթ նիստի ՕՐԱԿԱՐԳԸ՝

1. Հրազդան համայնքի կողմից Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքին հանձնված գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը ընդունելու մասին:
2. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին:
3. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 5-ի N 46-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
4. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 5-ի N 50-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:


Կողմ -7

Դեմ -0


Ձեռնպահ -0


1. ԱԼՈՅԱՆ ՍԱՐԳԻՍ 

2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ 

3. ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ 

4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ 


5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ 


6. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ 

7. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵՆԱԿ 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
 ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 56-Ա

**ՀՐԱՉԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ
ՀԱՆՁՆՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի N 130 որոշումը և Լեռնանիստ համայնքի ղեկավարի 2017 թվականի դեկտեմբերի 19-ի առաջարկությունը.

Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

- Հրազդան համայնքի կողմից Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցված 6.996 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը ընդունել Լեռնանիստ համայնքի վարչական տարածք՝ որպես համայնքային սեփականություն:
- Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո սահմանված կարգով Լեռնանիստ համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՍԱՐԳԻՍ

2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ

3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ


5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՍԱՆ

6. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱԿԱԿ

7. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵՆԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 57-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 7-րդ կետերի, հիմք ընդունելով Լեռնանիստ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 2-ի N 67-Ն որոշմամբ հաստատված Լեռնանիստ համայնքի ավագանու կանոնակարգի 22-րդ, 23-րդ կետերի

Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

- Ստեղծել Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով հետևյալ կազմով՝
 - 1) Իսահակ Մելքոնյան
 - 2) Գրիգորի Բարեղամյան
 - 3) Ռոման Մանուկյան
- Ստեղծել Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու իրավական, ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական և ենթակառուցվածքային հարցերի մշտական հանձնաժողով հետևյալ կազմով՝
 - 1) Գենադի Ավագյան
 - 2) Մեխակ Նազարյան
 - 3) Սամվել Բաղդասարյան
- Ստեղծել Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու գյուղատնտեսության, քաղաքաշինության, հողօգտագործման և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողով հետևյալ կազմով՝
 - 1) Սարգիս Ալոյան
 - 2) Քերոբ Զոհրաբյան
 - 3) Ռազմիկ Գրիգորյան
- Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից ։

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՍԱՐԳԻՍ

2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ

3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ


5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ

6. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱԿԱԿ

7. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՏՅՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 58-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 46-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 5-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափերը սահմանելու մասին >> N 46-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրվանից:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՍԱՐԳԻՍ

2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ

3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ

5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ

6. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ

7. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության /տեղադրման/ /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական շենքերի և շինությունների համար.

1) մինչև 300 քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար **4.500 դրամ**

2) **Սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝**

ա. 200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **9.000 դրամ:**

բ. 500 -ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **15.000 դրամ:**

գ. 1000 -ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **15.000 դրամ:**

դ. 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **30.000 դրամ**

ոչ հիմնական շենքերի և շինությունների համար

ե. մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **900 դրամ**

զ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **1500 դրամ**

2. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնեցման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ **900 դրամ**

2) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ

թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3. համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ **1500** դրամ.

4. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **50 000** դրամ.

5. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **10 000** դրամ.

6. համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **50 000** դրամ.

7. Համայնքի վարչական տարածքում՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **3 000** դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **3900** դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **4500** դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **6100** դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **7600** դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **13600** դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ սահմանել **3 000** դրամ,
- բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել **3900** դրամ,
- գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել **4500** դրամ,
- դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել **6100** դրամ,
- ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել **7600** դրամ.
- զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել **13600** դրամ

8. Համանքի տարածքում՝

1) Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար մեկ քառակուսի մետրի համար տեղական տուրք սահմանել **350** դրամ՝

9. Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար օրացուցային տարվա համար սահմանվում է՝

- 1) առևտրի օբյեկտների համար՝ **25 000** դրամ,
- 2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **50 000** դրամ,
- 3) բաղնիքների (սաունաների) համար՝ **200 000** դրամ,
- 4) խաղատների համար՝ **500 000** դրամ,
- 5) շահումով խաղերի համար՝ **500 000** դրամ,
- 6) վիճակախաղերի համար՝ **150 000** դրամ.

10. Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

1) հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **1 000** դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **2000** դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **4000** դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **6000** դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **8000** դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **10000** դրամ.

2) ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **300** դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **600** դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **1000** դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **2000** դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **4000** դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **6000** դրամ.

11. Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար սահմանել՝

1) ակոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **2000** դրամ,

2) թունդ ակոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **3500** դրամ,

3) սոցիալական գովազդի համար՝ **0** դրամ,

4) այլ արտաքին գովազդի համար՝ **1500** դրամ,

5) դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

6) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանել տուրքի 10 %-ի չափով.

12. Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար սահմանել **30 000** դրամ.

13. Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար սահմանել **3000** դրամ.

14. Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար սահմանել **150 000** դրամ.

15. Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **2.500.000** Հայաստանի Հանրապետության դրամ.

2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **5.000.000** Հայաստանի Հանրապետության դրամ.

3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **7.000.000** Հայաստանի Հանրապետության դրամ.

4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **10.000.000** Հայաստանի Հանրապետության դրամ

16. համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ **5000 դրամ**:

17. ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել **10000** դրամ

18. ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել **5000** դրամ

19. համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել **0** դրամ:

20. համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ **5000 դրամ**

21. համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել **0** դրամ:

22. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել՝

1) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճար սահմանել ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ **500** դրամ:

2) կենտրոնացված ջեռուցման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար սահմանել **0** դրամ:

3) Կենցաղային աղբի համար աղբահանության վճար սահմանել ըստ հաշվառված անձանց քանակի (համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող) և /կամ/ փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական **150** դրամ:

4) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ **500** դրամ:

5) ջրմուղ-կոյուղու ծառայություններ իրականացնելու համար՝ մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար սահմանել **0** դրամ:

6) ոռոգման ջրի մատակարարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար սահմանել **0** դրամ:

7) համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար սահմանել 0 դրամ:

8) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար՝ ծնողական վճար սահմանել մանկապարտեզ հաճախող յուրաքանչյուր երեխայի համար ամսական **4000** դրամ:

9) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար սահմանել 0 դրամ:

10) համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 0 դրամ .


11) համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար սահմանել 0 դրամ:

12) համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար տեղական վճար սահմանել 0 դրամ:

13) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ սահմանել **500** դրամ փոխհատուցման վճար:

ԼԵՌՆԱՆԻՍ ԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա.ԱՅՐԱՊԵՏՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 59-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ 2017
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 50-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ
հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

- Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 5-ի
<< Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու
մասին >> N 50-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման հավելվածը
շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող
10-րդ օրվանից

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՍԱՐԳԻՍ

2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ

3. ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ

5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ

6. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱԿԱԿ

7. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՏՅՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ